Երվանդ Նազարեթյան

Տիրամայր

Ահա զգում եմ հայացքդ բարի,

Իբրև անդադար բարեխոսություն,

Եվ լույս է հագնում իմաստն իմ բառի

Աշխարհի բովում, օրերում անգույն:

Իսկ ես թերթում եմ անցյալս տարտամ,

Որ արժանի չէ քո Յոթ Վերքերին,

Ու խնդրում եմ քեզ հերթական անգամ

Գայթած ճամփեքս նորից ինձ ներիր:

Խոսնակս դարձիր սիրովդ անվերջ,

Իսկ արցունքդ թող իմ սրտով կաթի,

Որ երբ որոտան շեփորներն անշեջ

Ոտքերիս փոշին իմ մասին պատմի:

Որ ողջույններով բյուր ու անհաշիվ

Երկնուղեշ երկնեմ՝ մեղավոր որպես,

Թույլ տուր ինձ սրտով հպվել քո փեշին,

Ջերմացրու հոգիս ու գրկիր մոր պես: